

ԽԱՐԱՐԱՐՈՒՄ ՓԼԱՏԵՐ ԹՎԵՐ ԴԵՊՐԵՐ...

Նա պատկած էր Լոնդոնից քիչ վեր, Թեմվայի ափին, ցեխի մեջ, ու լալիս էր: Կենդանիների սահմանման ընկերության տեսուչին, որը կանչվեց հեռախոսով, մի փոքր մտահոգեց հեկեկացող հարարածի չափերը: Դա վեց մետրանոց մի կետ էր: Վիթխարի կենդանին պատկած էր կողքի, և նրա որովայնը վերովարում էր շնչառությանը համապատասխան: Արցունքի խոշոր կաթիլները գլորվում էին նրա աչքերից:

Մակընթացության հետևանքով նա ընկել էր Թեմվայի գետաբերանը, անցել Լոնդոնի կենտրոնով, բայց այդտեղ վրա էր հասել տեղատվությունը:

Փրկարարների համար պարզ էր, որ նոր մակընթացությունը կկործանի կետին: Չէ որ նա օդը ներշնչում է «շնչափողով», մի բացվածք, որը գտնվում է գլխի վերևի մասում: Իսկ երբ ջուրը բարձրանա, այդ անցքն ավելի շուտ կլցվի, քան կետը կհասցնի լողալ:

Էնտուսիաստների օգնությամբ հաջողվեց կետին հրել ջուրը: Հայտնվելով հարավատ տարերքում, նա պոչով հարվածեց ջրին, մի լավ թրջեց իր փրկարարներին, և լողաց գետի հոսանքն ի վար:




Ֆրանսիայում սկսել են արտադրել այնպիսի միկրոֆոններ, որոնք կարելի է տեղավորել երաժշտական գործիքի ներսում: Այդ արվում է համերգների ժամանակ դահլիճի աղմուկից պերծ, մաքուր ձայնագրություններ ստանալու նպատակով: Այդ միկրոֆոնների մեջ կան նաև այնպիսիները, որոնք նախատեսված են ջութակի, ակորդեոնի և երաժշտական այլ գործիքների համար:

Ֆիլադելֆիայի կենդանաբանական այգու ծառայողն առավոտյան մտնելով տերարիում, աֆրիկյան չափավանց վտանգավոր թունավոր օձին, որն իր տեսակի մեջ միակն էր այգում, տեսավ սատկած: Նրա առամներն ամուր խրված էին սեփական մարմնի մեջ:

Սողունների դասի մասնագետները, վննելով «հանգուցյալին», եկան այն ելրակացության, որ օձը ցանկացել է մեջքը բորել և, ավելի հարմար բան չգտնելով, որոշել է, ինչպես այդ անում են շատ կենդանիներ, օգտվել սեփական առամներից:

Ոչ ճիշտ շարժումը ճակատագրական է եղել...




Կաշաբոյնո-Բալկարիայում կա մի արտասովոր լիճ, որը կոչվում է Չերեք-Գլոյ: Նրա խորությունն, օրինակ, 258 մետր է և զգալիորեն գերազանցում է երկարությանը: Լճի մեջ մի առվակ անգամ չի թափվում, բայց ժամում հոսում է 3240 խորանարդ մետր ջուր: Այստեղ ոչ ձուկ կա, ոչ էլ մի այլ կենդանի արարած: Զմռանն ու ամռանը նրա ջերմաստիճանն անփոփոխ է՝ 9 աստիճան ջերմություն...

Գիտնականները լուծեցին այդ արտասովոր լճի գաղտնիքը: Պարզվեց, որ նա սնվում է ստորերկրյա աղբյուրներով, որոնց ջուրը հագեցված է ծծմբաջրածնով: Այդ իսկ պատճառով լճում կյանք չկա: Զրի հաստատուն ջերմաստիճանը բացատրվում է լճի հսկայական խորությամբ և հոսունությամբ: Զուրը չի հասցնում ոչ ամռանը տաքանալ, ոչ էլ ձմռանը սառչել:

Որքա՞ն սխալ կարելի է անել լրագրի մի էջում: Այսպիսի հարց տվին էլեկտրոնային-հաշվիչ մեքենային կանադական հրատարակչություններից մեկի աշխատակիցները: Վերլուծության համար նրա տրամադրության տակ դրին թերթի պատահական մի համար: Ահա մեքենայի պատասխանը. սխալների առավելագույն թիվը հասար է 4.367 428-ի:



Աֆրիկայի և Կենտրոնական Ամերիկայի բնիկները միջատների որոշ տեսակների օգտագործում են վերքի վրա կարեր դնելու համար: «Վիրաբույժը» միացնում է վերքի եզրերն ու զգուշորեն միջատին մոտեցնում վերքին: Վերջինս, մաշկի հետ շփվելու պահին ծնոտներով սեղմում է վերքի եզրերն ու նրանք ամուր միակցում միմյանց:



Ավտոմոբիլային աղետների թիվը նվազեցնելու նպատակով Ամերիկայում ստեղծվել է մի օրիգինալ արագաչափ (սպիդոմետր): Ժամում 100 կիլոմետրից ավելի արագության դեպքում նրա թվացույցին հայտնվում է վարորդի ընտանիքի անդամների լուսանկարը: Կարծես թե կինն ու երեխաները նրան նախազգուշացնում են. «Մի մոռացիր մեր մասին...»:





Անցյալ դարի վերջերին, երկու խելամիտ անգլիացի, բրիտանական հանրամատչելի լրագրերից մեկում հրապարակեցին հետևյալ հայտարարությունը. «Լավ ընտանիքի 20-ամյա մի աղջիկ, որն իր տրամադրության տակ ունի 2 միլիոն ֆունտ ստերլինգի կարողություն, ամուսնանալու նպատակով ցանկանում է ծանոթանալ մի կարգին երիտասարդի հետ»:

Աշխարհի տարբեր ծայրերից այդ հայտարարությանն արձագանքեցին 30 հազարից ավելի փեսացուներ: Այսպիսով՝ հայտարարության հեղինակներն ստացան նամականիշների ամենախոշոր հավաքածուներից մեկը:

Լաբորատոր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մուկն իր կյանքի կեսն անց է կացնում իրեն հարդարելով:



Իր կշռի համեմատությամբ, փիղը շատ ավելի թույլ է մարդուց: Մարդը կարող է բարձրացնել մեկ այլ մարդու, իսկ փիղը փղին՝ ոչ: Փիղը շատ ուժ է կորցնում ոտքի վրա մնալու համար: Նա լավ հիշողություն ունի, բայց բնական պայմաններում նրանից այնքան էլ շատ բան չի պահանջվում հիշել: Հոտի առաջնորդը սովորաբար էգն է լինում: Մի հետաքրքիր առանձնահատկություն ևս. փիղը լեղապարկ չունի: Ոմանք հենց դրանով են բացատրում փղի բարենոգությունը:

ԱՄՆ-ի ռադիոֆիզիկոսներից մեկը նորաձևությունների սիրահարներին ծանծրույթից ալատելու համար առաջարկել է մի նորույթ՝ երաժշտական ժակետ: Նրա մեջ սարքավորված է մի պտտիկ ռադիոընդունիչ, որն աշխատում է տրանսլիստորներով: Ձմալեցուցիչ են ժակետի թանկարժեք կոճակները, որոնք միաժամանակ ծառայում են որպես ընդունիչի միացման, ձայնի ու տեմբրի կարգավորման բռնակներ և այլն...

